

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03

«Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

22.10.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 60 (վաթսուն) անդամից ներկա էին 47-ը (քառասունյոթ):

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ պատմաբանասիրական ֆակուլտետի  
Դեկան Ս. Հայրապետյան

2. Մանկավարժության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ մանկավարժության  
ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյան

3. Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման լրամշակված կանոնակարգի հաստատում:

Զեկ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով  
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

4. Ընթացիկ հարցեր:

- 4.1 ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում մասնակի փոփոխություններ կատարելու մասին:

Հաղ.՝ ռեկտոր, պրոֆեսոր  
Վ. Գրիգորյան

**4.2 ԳՊՄԻ-ի հիմնական աշխատակից հայցորդների ուսման վարձի չափը սահմանելու մասին:**

Հաղ` Գիտության և արտաքին կապերի կապերի գծով  
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՎԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

**1.ԼՍԵՑԻՆ.- Պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Ս. Հայրապետյանի զեկույցը պատմաբանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության, ինչպես նաև բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր, մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը, գիտական գրադարանի տնօրեն Գ. Աղուզումցյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան, կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մ. Խաչատրյանը:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը նկատեց, որ հսկայածավալ աշխատանք է կատարվել ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում: Չնայած մարդկային ռեսուրսների ու աշխատանքի ծավալի միջև անհամապատասխանությանը` մեծածավալ աշխատանքների կատարումը չի տուժել: Այժմ եկել է որակի ապահովման հանդեպ լուրջ պահանջներ դնելու և դրանց իրագործումն ապահովելու ժամանակը: Նա նկատեց, որ կա անհամապատասխանություն` կապված հայոց լեզու և գրականություն մասնագիտության գծով

դիմորդների ընդունելության բարձր միավորների և ուսումնառության ընթացքում միջանկյալ քննությունների ցածր միավորների միջև:

Այդ հարցը Ս. Հայրապետյանը հիմնավորեց դասախոսների խիստ պահանջներով:

Գրադարանի տնօրեն Գ. Աղուզումցյանը շնորհակալություն հայտնեց Ս. Հայրապետյանին ֆակուլտետի ակտիվ գործունեության համար:

Վ. Գրիգորյանը ևս արժևորեց Ս. Հայրապետյանի դերը ֆակուլտետի աշխատանքների կոորդինացման գործում, սակայն կարևորեց նաև ֆակուլտետում համապատասխան մասնագիտությունների գծով վերջին տարիներին դիմորդների թվաքանակի կտրուկ նվազումը:

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ղեկան, կ.գ.թ., դոցենտ Ա. Գրիգորյանը կարևորեց ֆակուլտետների ղեկանների միջև առկա առողջ մրցակցությունը, միաժամանակ նաև՝ համագործակցային ներուժը:

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Մ. Խաչատրյանի կարծիքով Ս. Հայրապետյանի ղեկավարմամբ ֆակուլտետում ստեղծված է համագործակցության մթնոլորտ: Եթե չլինեին նորմալ մարդկային հարաբերություններ, աշխատանքը դրական լինել չէր կարող: Ինչ վերաբերում է բացթողումներին, ապա դրանք չպետք է ազդեն մարդկային հարաբերությունների վրա. պարզապես հարկավոր է ժամանակին բարձրաձայնել: Նա նշեց, որ բոլոր աշխատակիցները հետևողական են խնդիրների բացահայտման, լուծման հարցում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկանի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

2. Հաստատել բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան պատմաբանասիրական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2. ԼՍԵՑԻՆ.**– Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանի ներկայացումը մանկավարժության ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության, ինչպես նաև բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**– Ռեկտոր, մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը, հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Կ. Սահակյանը, նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Հակոբյանը, մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Ղուկասյանը:

Հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Կ. Սահակյանի խոսքերով՝ ֆակուլտետում աշխատանքները թափանցիկ են, նպատակամիտված որակի ապահովմանը: Որպես ֆակուլտետի առավելություն նշեց ֆակուլտետի ուսանողակենտրոնությունը: Ուսանողների, դասախոսների որակի ապահովման ու բարձրացման հարցում կարևորեց ինչպես ներբուհական, այնպես էլ արտաբուհական կապերի, համագործակցության խրախուսումը: Օրինակ, մասնավորապես հիշատակեց այն իրողությունը, որ այս ուսումնական տարում ՀՊՄՀ-ի հոգեբանության գծով մասնագետները ևս մասնակցելու են մագիստրոսական թեզերի դեկավարման գործընթացին:

Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Հակոբյանը հավելեց, որ այս ուսումնական տարում ուսանողները մեծ

պատրաստակամությամբ օգնել են դասախոսներին՝ բուհը ԳՊՄԻ-ի տարբեր դպրոցներում ներկայացնելու հարցում: Նաև՝ այս տարի իր ղեկավարած ամբիոնի դասախոսները հրատարակել են գիտական աշխատանքներ:

Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լ. Ղուկասյանը հիշատակեց ֆակուլտետում տիրող առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը: Հատկապես համագործակցության շնորհիվ կարողանում են արդյունավետ կերպով կազմակերպել աշխատանքներն ու հաղթահարել ընթացիկ դժվարությունները:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը բարձր գնահատեց ֆակուլտետում աշխատանքի բաժանման կուլտուրան, հանձնարարությունների հանդեպ պատասխանատու մոտեցումը: Միաժամանակ կարևորեց մագիստրոսների, երրորդ աստիճանի հետազոտողների գիտական աշխատանքների ղեկավարման համար համարժեք գիտական ղեկավարների նշանակումը, ինչպես նաև գիտական աշխատանքների հաշվետվության մակարդակի բարձրացումը:

Ռեկտոր, մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գրիգորյանին հետաքրքրում էր «ավագների խորհուրդ» նախաձեռնությունը: Ռ. Մարդոյանը բացատրեց, որ ավագների խորհուրդը ներկայացուցչական մարմին է, որը կազմված է իր ֆակուլտետի բոլոր կուրսերի ավագներից: Ավագների խորհրդի ստեղծումը ֆակուլտետի ուսանողների իրազեկվածության մակարդակի ապահովման նպատակ է հետապնդում: Կուրսերի ավագներին ուսումնառությանը վերաբերող տեղեկատվության փոխանցմամբ ապահովվում է ուսանողների իրազեկվածությունը:

Բացի դրանից, Վ. Գրիգորյանը նկատեց, որ ֆակուլտետների ղեկաններն իրենց ամենամյա որոշման նախագծերի կետերի

իրագործման արդյունքներին առանձնապես չեն անդրադառնում: Համապատասխանաբար հանձնարարեց ֆակուլտետների ղեկաններին այսուհետ որոշման նախագծերի կետերի իրագործման արդյունքների վերաբերյալ առանձին զեկուցումների պատրաստումն ու ներկայացումը իրականացնել յուրաքանչյուր տարվա հունիս ամսին:

Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Մաթևոսյանն առաջարկեց ներկայացնել ավելի վաղ՝ մայիս ամսին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1. Մանկավարժության ֆակուլտետի ղեկանի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

2. Հաստատել՝ բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան մանկավարժության ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

3. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին ամենամյա հաշվետվություններին կից ներկայացվող որոշման նախագծերի կետերի իրագործման արդյունքների վերաբերյալ առանձին զեկուցումների պատրաստումն ու ներկայացումը մայիս-հունիս ամիսներին:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**3.ԼՍԵՑԻՆ.-** «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց այն կետերը, որոնք ենթարկվել են փոփոխման:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի նպաստների, պետական և

ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ):

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**4. ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարց:**

**4.1 ԼՍԵՑԻՆ.-** Ինստիտուտի ռեկտոր Վ. Գրիգորյանի հաղորդումը ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում մասնակի փոփոխություններ կատարելու մասին:

Վ. Գրիգորյանը նշեց, որ, հիմք ընդունելով կառավարման խորհրդի թվով երեք անդամ-ուսանողների՝ ԳՊՄԻ-ում ուսումնառությունն ավարտելու իրողությունը, ուսանողության կողմից ընտրվել են՝

- Անդրանիկ Մարգարյանի /պատմություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/ փոխարեն պատմաբանասիրական ֆակուլտետի իրավագիտություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ալբինա Կարենի Կարապետյանը,
- Մարինե Աբաջյանի /մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/ փոխարեն մանկավարժության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Միքայելի Համբարյանը,
- Անի Մկրտչյանի /անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/ փոխարեն օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Մելինե Մինասի Շահնազարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի կանոնադրության 16.2 կետի համաձայն՝ ինստիտուտի ուսանողության կողմից Անդրանիկ Մարգարյանի /պատմություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/, Մարինե Աբաջյանի /մանկավարժություն և հոգեբանություն

մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/ ու Անի Մկրտչյանի /անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրս/ փոխարեն ընտրված պատմաբանասիրական ֆակուլտետի իրավագիտություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Ալբինա Կարենի Կարապետյանին, մանկավարժության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Միքայելի Համբարյանին ու օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Մելինե Մինասի Շահնազարյանին ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**4.2 ԼՍԵՑԻՆ.**- Գիտության և արտաքին կապերի կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանի հաղորդումը ԳՊՄԻ-ի հիմնական աշխատակից հայցորդների ուսման վարձի չափը սահմանելու մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- ԳՊՄԻ-ի հիմնական աշխատակից հայցորդների համար վարձաճարի չափ սահմանել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**